

ՇԱՐԺԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԵՏ-ԿԱԿԱ -1 ՍԱՐՔ

Շարժական էլեկտրոնային ՍԵՏ-ԿԱԿԱ -1 սարքը նախատեսված է պնևմատիկ անվադողի և ճանապարհաձաձկույթի կցման գործակցի որոշման համար և օգտագործվում է՝


- ճանապարհների շինարարության ժամանակ,
- ճանապարհների ձաձկույթի ընթացիկ հսկողության ժամանակ,
- ճանապարհները շահագործման ընդունելու ժամանակ,
- ճանապարհորանսպորտային պատահարների տեղերի հետզոտման ժամանակ,
- ճանապարհների վտանգավոր տեղամասերի հետզոտման ժամանակ:

Սարքի աշխատանքի սկզբունքը հիմնված է լրիվ արգելակված անիվը ճանապարհաձաձկույթի վրա սահքի նմանակմանը, փոխազդեցության նորմատիվ պայմաններում: Պնևմատիկ դողի և ճանապարհաձաձկույթի կցման գործակցի չափումները կատարվում են անվադողը ճանապարհի վրա տարբեր տեսակարար ճնշման պայմաններում 4,0 կգ/սմ² թեթև մարդաստար և 8,0 կգ/սմ² մեծ զանգվածով ավտոմոբիլների համար: Այդ նպատակի համար սարքը ունի հանովի կոճղակներ ռետինե և պոլիմերային նյութից պատրաստված վերդիներով: Սարքը կահավորված է էլեկտրոնային բլոկով, որը չափում և հաշվարկում է կցման գործակիցը ըստ CH PP 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» նորմատիվ փաստաթղթի պահանջներին համապատասխան:

Սարքի բաղկացած է սայլակ - շրջանակից, որի վրա տեղադրված է տեստավորող բեռը: Շրջանակի երեք կետերում հարմարեցված են կալունակներ, որոնց վրա ամրացվում են կոճղակները ռետինե և պոլիմերային վերդիներով: Կոճղակները ռետինե և պոլիմերային վերդիները ունեն հենման-շփման տարբեր մակերեսներ թեթև մարդաստար և բեռնատար ավտոմոբիլների համար:

Սարքը կահավորված է տենզոմետրական տվիչով, հաշվող անալիտիկ էլեկտրոնային բլոկով, որը կատարում է կցման գործակցի հաշվարկ-ճշգրտում ըստ շրջակա միջավայրի ջերմաստիճանի և սայլակի տեղաշարժի արագության:

Չափման արդյունքները յուրաքանչյուր երկու վայրկյանը մեկ արտացոլվում են հեղուկ բյուրեղային մոնիտորի վրա չափագրման յոթ տարբեր կետերով անցնելու ժամանակ: Մոնիտորի վրա արտացոլվում է նաև չափման օրը, ժամը, ճշտորոշված կցման գործակցի արժեքը և բոլոր այդ տվյալները թվայնացված գրանցվում են էլեկտրոնային կրիչի մեջ (չիպ) հետագա օգտագործման նպատակով:



ՄԱՐՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- կցման գործակցի չափման սահմանները 0,05÷ 1,0,
- չափման ճշտության միջակայքը 0,01,
- չափման թույլատրելի շեղման սահմանը 0,02 %,
- բեռի զանգվածը 25 կգ,
- աշխատանքային ջերմաստիճանի սահմանները -10°C մինչև +50°C:

*Մշակված և պատրաստված է Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարանում*